



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ

333

375015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 2534-Ա

« 24 » դեկտեմբերի 2003 թ.

ՎԱՐԱՁԴԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ  
ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարազդատ Պետրոսյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Բաբայան և Կ.Ուլնեցու փողոցների հատման մասում վարձակալած 6900,0քմ հողատարածքի համար գնման նախապատվության իրավունք տալու և սահմանված կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Երևանի քաղաքապետի 16.06.2003թ. հ.1308-Ա որոշման հիման վրա Վարազդատ Պետրոսյանի հետ 14.10.2003թ. կնքվել է հողի վարձակալության պայմանագիր և տրվել անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման 06.11.2003թ. հ.0102800 վկայականը:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 04.12.2003թ. հ.18-09/6929 եզրակացությունը, ինչպես նաև անշարժ գույքի կառավարման վարչության 19.12.2003թ. հ.20/1-Պ-89 զեկուցագիրը:

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությանը /Կ.Դավթյան/ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Վարազդատ Պետրոսյանի հետ կնքել համաձայնագիր՝ 14.10.2003թ. հողի վարձակալության պայմանագրում վարձակալին հողամասի գնման նախապատվության իրավունք տալու վերաբերյալ լրացուցիչ կետ ավելացնելու մասին, պայմանագրով սահմանված մյուս պարտավորությունները թողնելով անփոփոխ:

2.Սահմանել, որ հողատարածքի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

3.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությանը (Կ.Դավթյան) Երևանի քաղաքապետի անունից:

3.1.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված համաձայնագիրը պետական գրանցում ստանալուց հետո, տարածքագնահատման 3-րդ գոտում, Բաբայան և Կ.Ուլնեցու փողոցների հատման մասում վարձակալությամբ տրամադրված 6900,0քմ մակերեսով հողամասն օտարել /վաճառել/ Վարազդատ Պետրոսյանին տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով:

3.2.Վաղաժամկետ լուծել Երևանի քաղաքապետի 16.06.2003թ. հ.1308-Ա որոշման հիման վրա Վարազդատ Պետրոսյանի հետ 14.10.2003թ. կնքված հողի վարձակալության պայմանագիրը՝ կնքելով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Նախագգուշացնել հողօգտագործողին, որ համաձայնագիրը և հողի առուվաճառքի պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն, ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության /Կ. Դավթյան/ վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

*Կ. Գ. Դավթյան*

Ե. ԶԱԽԱՐՅԱՆ

